


3. Եթե ստացված գումարի մեծությունը մեծ է հիմնական կենսաթոշակի հնգապատիկից, ապա կենսաթոշակը՝

- կարող էք ստանալ ամբողջությամբ անուիտետի ձևով, կամ
- հիմնական կենսաթոշակի հնգապատիկի չափով գումարը կարող էք ստանալ անուիտետի ձևով, իսկ հնգապատիկը զերազանցող մասը կարող էք ստանալ միանվագ վճարի, ծրագրային վճարի կամ անուիտետի ձևով:



Մինչև կենսաթոշակային տարիքը լրանալը կամ դրանից հետո մասնակցի մահվան դեպքում նրա կուտակային միջոցները ժառանգության կարգով փոխանցվում են ժառանգներին:

Անուիտետի դեպքում կուտակային միջոցները ժառանգվում են միայն երաշխիքային ժամկետում մասնակցի մահվան դեպքում: Երաշխիքային ժամկետը (ժառանգման իրավունքի պահպանման ժամկետ)՝ 5 կամ 10 տարի, կախված է մասնակցի գնած անուիտետի տեսակից:

Անձը կարող է ստանալ իր կուտակային կենսաթոշակը 55 տարեկանը լրանալուց հետո, եթե այդ պահին նրա կենսաթոշակային հաշվում առկա կենսաթոշակային ֆոնդերի ընդհանուր հաշվարկային արժեքը բավարար լինի հիմնական կենսաթոշակի 5-ապատիկից ոչ պակաս չափով, ցմահ անուիտետ գնելու համար:

Այս շարքից.



Իմացիր ավելին...

www.ePension.am



«Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն» հիմնադրամ

Հասցե՝ Երևան, 0069, Կարապետ Ուլունեցի 68

060 50 74 00
060 50 87 00

ePension@ePension.am



Այս տեղեկատվական թերթիկը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՁԳ) միջոցով: Բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄՁԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԿՀԻԿ

«Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն» հիմնադրամ



ԽՆԱՅՈՒՄ ԵՆԸ
ԲԱՐԵԿԵՅԻԿ ԱՂԱԳԱՅԻ ՀԱՄԱՐ

ԵՐԲ ԵՎ ԻՆՉ ՁԵՎՈՎ
ԿՍՏԱՆԱՔ ՁԵՐ
ԿՈՒՏԱԿԱՅԻՆ
ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ



www.ePension.am

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ
ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐ

2014 թվականի հուլիսի 1-ից մեկնարկել է ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Եթե Դուք ծնվել եք 1974 թվականին կամ դրանից հետո
և վարձու աշխատող եք, նուտար կամ անհատ
ձեռնարկատեր, ապա 2014 թվականի հուլիսի 1-ից
Դուք **ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ** համակարգի
մասնակից եք:

Կուտակային բաղադրիչի մասնակիցը իր կուտակային կենսաթոշակը կարող է ստանալ կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո:

Նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը, մասնակիցը կարող է ամբողջությամբ միանվագ ստանալ իր միջոցները, եթե՝

- անբուժելի հիվանդ է,
- ճանաչվում է աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության երրորդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ,
- օտարերկրյա քաղաքացի է և մեկնում է մշտական բնակության վայր: Այդ դեպքում մասնակցի հաշվում կուտակված ողջ գումարը փոխանցվում է տվյալ երկրում նրա համար բացված անհատական կենսաթոշակային հաշվին:

Ձեր կուտակային կենսաթոշակը Դուք կարող եք ստանալ որպես՝

- Միանվագ վճար
- Անուիտետ
- Ծրագրային վճար:


- **Միանվագ վճար.** Ձեր կուտակած միջոցներն ամբողջությամբ և միանվագ վճարում են Ձեզ 63 տարեկանում: Պետական կենսաթոշակը շարունակում եք ստանալ ցմահ:
- **Անուիտետ.** Ձեր կուտակած միջոցները փոխանցվում են ապահովագրական ընկերությանը, որը Ձեզ ցմահ վճարում է ամրագրված գումարը՝ անգամ Ձեր կուտակած գումարի սպառումից հետո:
- **Ծրագրային վճար.** Ձեր կուտակած միջոցները բաժանվում են կյանքի սպասվող միջին տևողության տարիների ամիսներին (վիճակագրական ցուցանիշ, ներկայումս 13-15 տարի՝ 156-195 ամիս) և վճարվում է այդ ամբողջ ընթացքում՝ յուրաքանչյուր ամիս հավասար մասնաբաժիններով, պետական կենսաթոշակի հետ միասին: Երբ կուտակային միջոցները սպառվում են, քաղաքացին շարունակում է ստանալ միայն պետական կենսաթոշակը:

Կուտակային կենսաթոշակի ստացման ձևը կախված է Ձեր կուտակած գումարի չափից, 63 տարեկանից հետո կյանքի սպասվող միջին տևողությունից և հիմնական կենսաթոշակի չափից:


Հիմնական կենսաթոշակը սահմանվում է պետության կողմից:

Կուտակված գումարը հավասարաչափ բաշխվում է 63 տարեկանից հետո՝ ըստ կյանքի սպասվող միջին տևողության ամիսների: Այնուհետև ստացված գումարի մեծությունը համեմատվում է հիմնական կենսաթոշակի հետ:

Հիմնական կենսաթոշակի հետ համեմատությունն իրականացվում է հետևյալ միջակայքով՝



1. Եթե ստացված գումարի մեծությունը փոքր է կամ հավասար հիմնական կենսաթոշակի 75%-ին, ապա Ձեր կենսաթոշակը կարող եք ստանալ **միանվագ վճարի, ծրագրային վճարի** կամ **անուիտետի ձևով:**



2. Եթե ստացված գումարի մեծությունը մեծ է հիմնական կենսաթոշակի 75%-ից, բայց փոքր կամ հավասար հիմնական կենսաթոշակի հնգապատիկին, ապա Ձեր կենսաթոշակը ստանում եք միայն **անուիտետի ձևով:**

